| 10. | Ձեռք բերվող (նվիրաբերվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Անհատ ձեռներեց Վահագն Մելիք-Մարտիրոսյանից թվով երկու համակարգիչների ձեռքբերում և անհատույց հանձնում՝ 390.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Համագործակցություն չի նախատեսվում |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (համայնքային եւ այլ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

12/1

12/1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ- 912 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՖՈՔԸՍ ՕՆ ՉԻԼԴՐԵՆ ՆԱՈՒ, ԻՆԿ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 20-ի N 07/80-2/22224-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 19-ի N 02/14/11686-16, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 19-ի N ՖԲ/ԱՆՄ-2-1/8576-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 19-ի N 06/3-8/27862-16 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի սեպտեմբերի 20-ի N 01/5642 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Վ. Համբարձումյան 2/37, ՀՎՀՀ՝ 00130776) իրականացվող՝ 2,447,000 դրամ արժողությամբ «Մանկական խաղահրապարակ Գյումրի քաղաքում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մագնոն» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05501766) 2016 թվականի սեպտեմբերի 13-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է խաղահրապարակի սարքավորումների պատրաստում՝ 2,447,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝



սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի իրականացման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

״Ֆոքըս օն չիլդրեն նաու,ինկ.״ԲԿ Հայաստանյան. մնճ. կազմակերպության

Տն՝Անահիտ [illegible] կողմից

«10» 09. 2016.թ.

Մ ա ն կ ա կ ա ն  խ ա ղ ա հ ր ա պ ա ր ա կ  Գ յ ո ւ մ ր ի  ք ա ղ ա ք ո ւ մ

Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Մանկական խաղահրապարակի տեղադրում մանկապարտեզի տարածքում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | ״Ֆոքըս օն չիլդրեն նաու,ինկ.״ Բարեգործական Կազմակերպություն, 6850 Քենդի պողոտա, սենյակ 102,Ռեսեդա,Կալիֆորնիա 91355,Լոս Անջելես |
| 4. | Ծրագիրը կատարողը | ״Ֆոքըս օն չիլդրեն նաու,ինկ.״ԲԿ Հայաստանյան մնճ.,ք.Երևան,Վ.Համբարձումյան 2շ,37 բն, ՀՎՀՀ 00130776 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Շիրակի մարզ,ք.Գյումրի,58 թաղամաս , սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | III եռ. 2016թ, 2,447,000ՀՀ դրամ առանց ԱԱՀ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Գյումրի քաղաքի համայնք |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 10.09.2016թ – 28.10.2016թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1փուլ .10.09.2016թ.-13.09.2016թ. պայմանագրերի մշակում և կնքում<br>2 փուլ 13.09.2016թ.-10.10.2016թ.խաղային սարքերի պատվիրում և պատրաստում,բյուջե-2,447,000 դրամ<br>3 փուլ 10.10.2016թ-20.10.2016թ. սարքերի տեղադրում,<br>4 փուլ 28.10.2016թ. խաղահրապարակի հանձնումը համայնքին: |
| 10. | Զեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Պայմանագիր 13.09.2016թ կնքված״Ֆոքըս օն չիլդրեն նաու,ինկ.״ԲԿ-ի ,״Մազնոն״ԲԲԸ-ի միջև - խաղահրապարակի սարքավորումների արժեքը 2.447.000դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Համագործակցություն է նախատեսվում տեղական ինքնակառավարման մարմինների հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Սահմանված կարգով կներկայացվի հաշվետվություն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ծրագրի ընթացքի և վերջնական իրականացման վերաբերյալ |



12/3

12/3

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ - 913 - Ա**

**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 22-ի N 07/80-2/22246-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 20-ի N ԱՄ/22.2/10196-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի սեպտեմբերի 19-ի N 06/3-8/27889-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից ARMENIA FUND INCORPORATED մասնաճյուղի կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված վիրաբուժական պարագաների (7 տեղ, 981 lbs քաշով, 13,247.90 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 3,240 ԱՄՆ-ի դոլար, ՄՓ և ՍԱՓԱՄ մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է անհատույց հանձնել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքի «Բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռների համապատասխան ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ - 914 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 13-ի N 07/80-2/21807-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի սեպտեմբերի 13-ի N 06/3-8/27260-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Վարդան Կիրոյի Կիրոյանցի (անձնագիր՝ N 03 05 546287, տրված՝ 07.09.2004 թ.) կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված շինարարական ապրանքների (21,808 կգ ընդհանուր քաշով, 940,840 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ - 915 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 13-ի N 07/80-2/21816-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի սեպտեմբերի 13-ի N 06/3-8/27262-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Վարդան Կիրոյի Կիրոյանցի (անձնագիր՝ N 03 05 546287, տրված՝ 07.09.2004 թ.) կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված շինարարական և սպորտային ապրանքների (20,949 կգ ընդհանուր քաշով, 4,186,563 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ - 916 - Ա**

**քաղ. Երևան**

**«ՀԱԼԷՊ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 16-ի N 07/80-2/22023-16, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 16-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/8543-16, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 15-ի N 05/16.1/1765-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 16-ի N 06/3-8/27720-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել ամերիկաբնակ բարերար Բեթ Բրուսելյանի կողմից «ՀԱԼԷՊ» հայրենակցական բարեսիրական հասարակական կազմակերպության հասցեով ստացված օգտագործված հագուստի և նոր կոշիկների (195.62 կգ քաշով, 350 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 463.60 ԱՄՆ-ի դոլար, ստացողների ցուցակը կցվում է, ՄՓ և ՍԱՓԱՄ մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո բաշխվելու է ըստ ներկայացված անվացուցակի:

2. «ՀԱԼԷՊ» հայրենակցական, բարեսիրական հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռը բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

*Առդիր՝*

Օգնություն ստացողների ցուցակ

12/4.11

| Ազգանուն, անուն | Անձնագիր | Հեռ. |
|---|---|---|
| 1. Ջին Կելգի | N 004201091 | 077 921184 |
| 2. Գևորգ Փայասյան | N 004704406 | 055 577942 |
| 3. Ֆահի Զազյասյան | N 006821651 | 094 482476 |
| 4. Էլիզաբեթ Քալայջի | RL 0657759 | 098 030271 |
| 5. Մարինա Խաչատրյան | AE 0439162 | 095 773213 |
| 6. Մարինա Բեքեջյան | N 006820094 | 096 007565 |
| 7. Գրիգոր Հովհաննես | N 005415606 | 098 582697 |
| 8. Լուսազին Գասպարյան | N 007337508 | 098 620504 |
| 9. Հովհաննես Բերբերիան | N 007413482 | 055 516067 |
| 10. Սիլվա Ճառտոյան | N 004717561 | 091 735550 |
| 11. Ջանեթ Թանաշյան | N 006059974 | 055 876540 |
| 12. Լինա Զազլաշյան | N 005348733 | 055 199560 |
| 13. Միրանուշ Ծառուկյան | N 009178890 | 096 662394 |
| 14. Մարի Հասկուր | N 006097753 | 098 670093 |
| 15. Սաքահ Մանսուր | N 002793726 | 098 579598 |
| 16. Թալին Թանաշյան | N 005067822 | 055 985852 |
| 17. Հերմին Կայօ | N 006250487 | 077 415071 |
| 18. Լոռա Քեչեջյան | N 006916535 | 055 717126 |
| 19. Կարեն Անտոնյան | N 001051541 | 077 364100 |
| 20. Անդրանիկ Սարգիս | N 004146754 | 077 866436 |
| 21. Նազելի Կատարիան | N 006871187 | 095 687827 |
| 22. Անդրանիկ Իրանյան | N 005131199 | 055076230 |
| 23. Հովհաննես Քեշիշյան | N 006767373 | 055 270140 |
| 24. Սարգիս Տեր Սարգսյան | N 005236109 | 095 110859 |
| 25. Յազակիլ Կոնդակջի | N 007277434 | 094 179192 |
| 26. Մարինա Կյոշկերիան | N 007041937 | 094 947971 |
| 27. Ջասքես Աստաֆան | N 006102492 | 077 160203 |
| 28. Երանուհի Հակոբյան | N 005566674 | 096 662982 |
| 29. Ավետիս Կարուժ | N 002725859 | 098 680366 |
| 30. Արամ Վարդանյան | N 005602351 | 055 701825 |
| 31. Զվարթ Դեկրմենջյան | N 006129006 | 098 734124 |
| 32. Ռիմանուշ Կոզակջյան | N 006255034 | 055 025014 |
| 33. Վերջին Շհիմելիան | N 007526875 | 055 025014 |
| 34. Մանուշ Կարապետյան | N 006018638 | 098 618985 |
| 35. Սիլվա Կալաջյան | N 008061223 | 077 484081 |

12/4.11

| | | |
|---|---|---|
| 36. Աշխեն Կաhկեջյան | N 003170143 | 093 908783 |
| 37. Վերջին Գուլսերիան | N 008600123 | 055 535605 |
| 38. Էլլա Հակոբյան | N 006290929 | 098 215522 |
| 39. Նուշիգ Թուֆենկջյան | N 055942854 | 093 556684 |
| 40. Սիրանուշ Դոհազյանիան | N 005648120 | 096 661958 |
| 41. Մաիդա Չաղազաբիան | N 005646716 | 095 594448 |
| 42. Վառնա Յակուբ | N 006494804 | 098 611132 |
| 43. Գրիգոր Հարբյան | N 002836940 | 098 284930 |
| 44. Քնարիկ Կազանջյան | N 006392290 | 093 721718 |
| 45. Սեթրակ Կոնջյան | N 008425646 | 096 662923 |

«ՀԱԼԵՊ»
"ALEPPO"
2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ- 917 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N Մ-1354-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 24-ի N 07/80-2/22439-16, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 22-ի N ՖԲ/ԱՆՄ-2-1/8703-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի սեպտեմբերի 22-ի N 06/3-8/28370-16 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի սեպտեմբերի 22-ի N 01/ 5684-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստան-Արցախ հիմնադրամի կողմից «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության հասցեով ուղարկված բեռը (2,672.10 կգ ընդհանուր քաշով, 111,080 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 5,920 ԱՄՆ-ի դոլար, բեռի և բաշխման ցանկերը կցվում են, Շիրակի տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 14-ի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Անհոգ մանկություն, ապահով ծերություն» ծրագրի մասին» N Մ-1354-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

# ՄԱՍՆԱՑՈՒՑԱԿ
# MSCU 6103609

12/4.19

| Հ/Հ | Ապրանքի տեսակ | Տեղերի քանակ | Քանակ (ընդամենը) | Քաշը (կգ) | | Արժեքը $ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | բրուտտո | նետտո | |
| 1 | դպրոցական պարագաներ | 6 | 6 արկղ | 77.6 | 71.6 | 1 900 |
| 2 | ատամի խոզանակ | 4 | 4 արկղ | 56.2 | 52.2 | 2 300 |
| 3 | պլաստիլին | 24 | 24 արկղ | 54.4 | 32 | 4 800 |
| 4 | հիշողության խաղեր | 12 | 12 արկղ | 27.2 | 21 | 1 800 |
| 5 | խաղ՝ Բարի գիշեր | 36 | 36 արկղ | 65.3 | 55 | 5 400 |
| 6 | կպչուն խաղեր | 36 | 36 արկղ | 163.3 | 135 | 7 200 |
| 7 | տիկնիկներ | 18 | 18 արկղ | 57.2 | 50 | 3 600 |
| 8 | խաղալիք մեքենաներ | 24 | 24 արկղ | 65.3 | 53 | 4 800 |
| 9 | Դիսնեի իշխանուհի | 9 | 9 արկղ | 24.5 | 18 | 1 350 |
| 10 | խաղալիք՝ փոքր հատիկներ | 3 | 3 արկղ | 24.5 | 21.5 | 1 200 |
| 11 | խաղալիք՝ առյուծիկներ | 12 | 12 արկղ | 130.6 | 115 | 2 400 |
| 12 | վրիժառուների խաղ (8 կտոր) | 9 | 8 հատ | 32.7 | 25 | 2 250 |
| 13 | վրիժառուների խաղ մեծ (2 կտոր) | 36 | 2 հատ | 98 | 80 | 5 400 |
| 14 | մորթե խաղալիք | 36 | 36 արկղ | 98 | 80 | 5 400 |
| 15 | խաղալիք փոքր ձի | 12 | 12 արկղ | 43.5 | 38 | 3 120 |
| 16 | փայլուն որդեր | 24 | 24 արկղ | 65.3 | 55 | 2 880 |
| 17 | պլաստիլինից զարդեր | 18 | 18 արկղ | 65.3 | 52 | 2 700 |
| 18 | խաղալիք զետաձի | 36 | 36 արկղ | 98 | 82 | 5 400 |
| 19 | քառանկյուն խաղեր | 18 | 18 արկղ | 40.8 | 35 | 1 800 |

12/4.19

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 20 | ոլորվող խաղալիք | 10 | 10 արկղ | 47.6 | 42 | 1 200 |
| 21 | խաղ՝ Քաղցրավենիքի աշխարհ | 12 | 12 արկղ | 43.5 | 36 | 1 800 |
| 22 | խաղ Բինգո | 12 | 12 արկղ | 43.5 | 38 | 1 800 |
| 23 | ֆուտբոլի գնդակներ | 36 | 36 արկղ | 163.3 | 150 | 4 680 |
| 24 | խաղ՝ Ռուբիկ- կուբիկ | 12 | 12 արկղ | 27.2 | 24 | 960 |
| 25 | փափուկ գնդակ | 36 | 36 արկղ | 163.3 | 150 | 3 400 |
| 26 | գրասենյակային պարագաներ | 1 | 1 արկղ | 18.1 | 17 | 300 |
| 27 | հագուստ և խոհանոցային պարագաներ | 2 | 2 արկղ | 49.9 | 48 | 880 |
| 28 | հագուստ | 27 | 27 արկղ | 626 | 600 | 22 450 |
| 29 | երեխայի քայլակ | 2 | 2 արկղ | 27.2 | 25 | 600 |
| 30 | ակնոց | 1 | 1 արկղ | 10 | 9 | 2 500 |
| 31 | երեխայի տակդիր | 41 | 41 արկղ | 164.8 | 150 | 4 810 |
| ընդամենը | | 565 | ----- | 36 արկղ | 2 360.3 | 111 080 |

Այս բեռի ընդհանուր քաշն է 2 672.100 (երկու հազար, վեց հարյուր յոթանասուներկու ամբողջ, մեկ տասնորդական) կգ, արժեքը՝ $111 080.00 (մեկ հարյուր տասնմեկ հազար, ութսնասուն դոլար), ճանապարհածախսը կազմում է $ 5 117.00 (հինգ հազար, հարյուր տասնյոթ դոլար):

ԱՆԱՐԱՏ ՀՂՈՒԹՅԱՆ ՀԱՅ ՔՈՒՅՐԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՎԵԼԻՔ ԲԵՌԻ ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ

Container MSCU 6103609

12/4.19

| Հ/Հ | Ստացող կազմա-կերպություն | Քանակ (արկղ, կգ, հատ, զույգ) | Արկղի պարունակություն | Ապրանքի անվանում | Միավորի արժեք $ | Ընդհանուր արժեք $ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Տիրամայր Հայաստանի ճամբար (մոտ 2500 շահառու) | 296 | 4 արկղ | ատամի խոզանակ | 575 | 2300 |
| | | | 24 արկղ | պլաստիլին | 200 | 4 800 |
| | | | 36 արկղ | խաղ՝ Բարի գիշեր | 150 | 5400 |
| | | | 36 արկղ | կպչուն խաղեր | 200 | 7 200 |
| | | | 24 արկղ | խաղալիք մեքենաներ | 200 | 4800 |
| | | | 9 արկղ | խաղ՝Դիսնեի իշխանուհի | 150 | 1350 |
| | | | 3 արկղ | խաղալիք՝ փոքր հատիկներ | 400 | 1200 |
| | | | 12 արկղ | խաղալիք՝ աղյուսիկներ | 200 | 2 400 |
| | | | 36 արկղ | մորթե խաղալիքներ | 150 | 5 400 |
| | | | 12 արկղ | խաղալիք փոքրիկ ձի | 260 | 3120 |
| | | | 36 արկղ | խաղալիք գետաձի | 150 | 5 400 |
| | | | 18 արկղ | քառանկյուն խաղեր | 100 | 1800 |
| | | | 10 արկղ | ոլորվող խաղալիք | 120 | 1200 |
| | | | 36 արկղ | ֆուտբոլի գնդակ | 130 | 4680 |
| 2 | Տիրամայր Հայաստանի Կենտրոն | 231 | 6 արկղ | դպրոցական պարա-գաներ | 316.67 | 1 900 |
| | | | 12 արկղ | հիշողական խաղեր | 150 | 1 800 |
| | | | 18 արկղ | տիկնիկ | 200 | 3 600 |
| | | | 9 արկղ (8 հատ) | վրիժառուների խաղ | 250 | 2 250 |
| | | | 36 արկղ (2 հատ) | վրիժառուների խաղ մեծ | 2 700 | 5 400 |
| | | | 24 արկղ | փայլուն որդեր | 120 | 2 880 |
| | | | 18 արկղ | պլաստիլինից զարդեր | 150 | 2 700 |
| | | | 12 արկղ | խաղ՝ Քաղցրավենիքի աշխարհ | 150 | 1 800 |
| | | | 12 արկղ | խաղ Բինգո | 150 | 1 800 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 12 արկղ | խաղ՝ Ռուբիկ-կուբիկ | 80 | 960 |
| | | | 36 արկղ | փափուկ գնդակ | 94.44 | 3 400 |
| | | | 1 արկղ | գրասենյակային պարագա | 300 | 300 |
| | | | 2 արկղ | հագուստ և խոհանոցային պարագա | 440 | 880 |
| | | | 27 արկղ | հագուստ | 831.48 | 22 450 |
| | | | 1 արկղ | ակնոց | 2 500 | 2 500 |
| | | | 5 արկղ | երեխայի տակդիր | 117.32 | 586.6 |
| 3 | | 38 | 2 արկղ | երեխայի քայլակ | 300 | 600 |
| | | | 36 արկղ | երեխայի տակդիր | 117.32 | 4 223.4 |
| ընդամենը | | 565 | ---- | ------- | ------- | 111 080 |

12/4.19

Այս բեռի ընդհանուր քաշն է 2 672.100 (երկու հազար, վեց հարյուր յոթանասուներկու ամբողջ, մեկ տասնորդական) կգ, արժեքը՝ $111 080.00 (մեկ հարյուր տասնմեկ հազար, ութանասուն դոլար), ճանապարհածախսը կազմում է $ 5 117.00 (հինգ հազար, հարյուր տասնյոթ դոլար)։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ - 918 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 22-ի N 07/80-2/22251-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 20-ի N 06/3-8/28015-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա, 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-035-Ա և մայիսի 20-ի N Մ-410-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2016 թվականի սեպտեմբերի 6-ին կնքված՝ N 18857974 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կապի ծառայությունների մատուցում՝ 156,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

02503251

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ - 919 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1 (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 22-ի N 07/80-2/22260-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 20-ի N 06/3-8/28016-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա, 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-035-Ա և մայիսի 20-ի N Մ-410-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կոնցեռն Դիալոգ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02538904) 2016 թվականի հունիսի 24-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունիսի 24-ից մինչև դեկտեմբերի 31-ը խորհրդատվական ծառայությունների մատուցում՝ 4,363,333 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՂԵԿԱՎԱՐ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ - 920 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N Մ-075-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ՀԱՅ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ (SOAR) - ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 19-ի N 07/80-2/22094-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 16-ի N 06/3-8/27718-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (SOAR)-Հայաստան» հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի «Աջակցություն մանկական հաստատություններում և ցերեկային կենտրոններում գտնվող ծնողազուրկ ու ֆիզիկական, մտավոր արատներ ունեցող երեխաներին» ծրագրի մասին» N Մ-075-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էլիտ Արման Շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05537917) 2016 թվականի սեպտեմբերի 8-ին կնքված՝ N 09/01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Վանաձոր քաղաքի Տարոն-2 թաղամասում գտնվող մանկատան 104 քառակուսի մետր սենյակի վերանորոգման շինարարական աշխատանքների իրականացում՝ 3,355,044 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ- 921 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի N Մ-237-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԴԵՊԻ ԱՌԱՋ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 20-ի N 07/80-2/22200-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 16-ի N 06/3-8/27752-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Դեպի առաջ» բարեգործական հասարակական կազմակերպության (ՀՎՀՀ՝ 00463845) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 13-ի «Դեպի առաջ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-237-Ա (2016 թվականի ապրիլի 29-ի N Մ-315-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սեմուր ընդ Կո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02560685) 2016 թվականի օգոստոսի 26-ին կնքված՝ եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Թալինի երաժշտական դպրոցի հիմնանորոգման համար անհրաժեշտ շինարարական ապրանքների մատակարարում՝ 1,154,044 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ- 922 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-1173-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 26-ի N 07/80-2/22514-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 22-ի N 06/3-8/ 28218-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մյասնիկյան 20, ՀՎՀՀ՝ 02565835) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից «Կովկասյան կենսաբազմազանության ապաստարան» ծրագրի մասին» N Մ-1173-Ա (2014 թվականի օգոստոսի 1-ի N Մ-768-Ա, 2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-827-Ա և 2016 թվականի մայիսի 20-ի N Մ-392-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն.

1) «Շահարտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04210867) 2016 թվականի օգոստոսի 30-ին կնքված՝ N ՋՄ-01/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Վայոց Ձորի մարզի



Գնիշիկի համայնքի ջրամատակարարման բարելավում՝ 7,994,550 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Շահարտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04210867) 2016 թվականի սեպտեմբերի 1-ին կնքված՝ N ՈՀ-01/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Տավուշի մարզի Չինարի համայնքում ոռոգման համակարգի կառուցում՝ 3,666,600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ - 923 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ-832-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Հայաստան» համահայկական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 27-ի N 07/80-2/22564-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 24-ի N 06/3-8/28619-16 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Հայաստան» համահայկական հիմնադրամի 2016 թվականի սեպտեմբերի 20-ի ՀՀՀ. 5/27-436 գրությունը,* **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 9-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կիրանց, Ենոքավան, Լուսաձոր, Ներքին Ծաղկավան, Սարիգյուղ և Սևքար գյուղական համայնքների հեռագնա արոտ տանող ճանապարհների վերանորոգում» ծրագրի մասին» N Մ-832-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «56,774,808 դրամ» բառերը փոխարինել «57,451,808 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՇԻՆԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03300044) 2016 թվականի օգոստոսի 8-ին կնքված՝ N ՀՀՏՀ-03/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցում՝ 677,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
[illegible] Վարդանյան
«20» սեպտեմբերի 2016թ.

« Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կիրանց, Ենոքավան, Լուսաձոր, Ներքին Ծաղկավան, Սարիգյուղ և Սևքար գյուղական համայնքների հեռագնա արոտ տանող ճանապարհների վերանորոգում »

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Վերականգնել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կիրանց, Ենոքավան, Լուսաձոր, Ներքին Ծաղկավան, Սարիգյուղ և Սևքար գյուղական համայնքների հեռագնա արոտ տանող ճանապարհները |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ Տավուշի մարզ, Կիրանց, Ենոքավան, Լուսաձոր, Ներքին Ծաղկավան, Սարիգյուղ և Սևքար գյուղեր, ճանապարհաշինության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 57.451.808,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Տավուշի մարզի վերոնշյալ գյուղերի բնակիչները |
| 8. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2016թ օգոստոսի 08 -ից մինչև 2016թ դեկտեմբերի 08-ը: |

12/5,14

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2016թ օգոստոսի 08-ից մինչև 2016թ դեկտեմբերի 08-ը ճանապարհների վերանորոգում՝ 57.451.808,00 դրամ արժողությամբ |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը | «ԼԵՎՈՆ ԵՐԿՐՈՐԴ» ՍՊԸ-ի կողմից Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կիրանց, Ենոքավան, Լուսաձոր, Ներքին Ծաղկավան, Սարիգյուղ և Սևքար գյուղական համայնքների հեռագնա արոտ տանող ճանապարհների վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 56.444.808,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>«ՀԳՇՆ» ՍՊԸ-ի կողմից շինարարական աշխատանքների հեղինակային հսկողություն՝ 330.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>«ՇԻՆԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի կողմից շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացում՝ 677.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Տավուշի մարզպետարանի հետ |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

12/5/14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ- 924 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N Մ-485-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ԴԵՊԻ ԱՌԱՋ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 22-ի N 07/80-2/22258-16 և Հայաստանի Հանրապետության կառավարու-թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 19-ի N 06/3-8/27864-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 13-ի N Մ-237-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին» («Դեպի առաջ» բարեգործական հասարակական կազմակերպություն) N 1» N Մ-485-Ա որոշման 1-ին կետի 2-րդ պարբերությունում «5,655,330 դրամի չափով» բառերը փոխարինել «6,318,072 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ- 925 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N Մ-495-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ԴԵՊԻ ԱՌԱՋ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 22-ի N 07/80-2/22282-16 և Հայաստանի Հանրապետության կառավարու-թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 19-ի N 06/3-8/27863-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 13-ի N Մ-237-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին» («Դեպի առաջ» բարեգործական հասարակական կազմակերպություն) N 2» N Մ-495-Ա որոշման 1-ին կետի 2-րդ պարբերությունում «3,727,752 դրամի չափով» բառերը փոխարինել «4,006,827 դրամի չափով» բառերով:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ - 926 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 28-ի N 07/80-2/22707-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 27-ի N 06/3-8/29109-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Ճարտարապետության և շինարարական կրթության աջակցության» հիմնադրամի կողմից «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի համար ձեռք բերված օդափոխիչ-սարքավորումների և օդի սառեցման ու ջերմացման օդորակիչների (50 տեղ, 1,473.25 կգ ընդհանուր քաշով, 36,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 440,000 դրամ, ԵՏՄ բեռ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ - 927 - Ա**
**քաղ. Երևան**

## «ԻԶՄԻՐԼՅԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 28-ի N 07/80-2/22711-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 27-ի N ԱՄ/22.2/10465-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 27-ի N 06/3-8/29096-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Բելգիայից Արպագ Մխիթարյանի անվան հայկական սոց. կենտրոնի միջոցներով, «Իզմիրլյան» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության հասցեով ուղարկված օգտագործված բժշկական գույքի (մեկ տեղ, 2,925 կգ ընդհանուր քաշով, 5,300 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 1,500 եվրո, բեռի ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Իզմիրյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

IZMIRLIAN
MEDICAL CENTER

26.09.2016թ. 356

Հր 12/3.5

Բեռի ցանկ

| Բեռի անվանումը | չ/մ | Քանակը | Միավորի արժեքը | Ընդհանուր արժեքը |
|---|---|---|---|---|
| Օգտագործված մեծահասակի էլեկտրոնային մահճակալ | հատ | 15 | 300 Եվրո | 4500 Եվրո |
| Օգտագործված մանկաբուժական վանդակ | հատ | 4 | 150 Եվրո | 600 Եվրո |
| Օգտագործված շարժաթոռ | հատ | 2 | 100 Եվրո | 200 Եվրո |
| Ընդամենը | | | | 5300 Եվրո |

«Իզմիրլյան» ԲԿ ՓԲԸ
գործադիր տնօրեն

Պրոֆ. Ա.Գ. Չարչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ - 928 - Ա**
**քաղ. Երևան**

## «ԿԻՍԱԲԱՑ ԼՈՒՍԱՄՈՒՏՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 27-ի N 07/80-2/22585-16, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 27-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/8872-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 27-ի N 06/3-8/28972-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից անհատ բարերար Քնար Սարկիսյանի կողմից «Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված նոր հագուստի և փափուկ խաղալիքների (2 տեղ, 53.28 կգ ընդհանուր քաշով, 200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» մաքսատուն) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը: Բեռը բաշխվելու է «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդաշարի մասնակից սոցիալապես անապահով ընտանիքներին:

2. «Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ու բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ- 929 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի N Մ-792-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 28-ի N 07/80-2/22710-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 27-ի N 06/3-8/28967-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ~~ստորև~~ նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 2-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Համայնքային տնային խնամք և առողջ ծերացում» ծրագրի մասին» N Մ-792-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արմենիա Հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02504956) 2016 թվականի սեպտեմբերի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է միջոցառումների կազմակերպում՝ 897,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ          Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ- 930 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N Մ-928-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 27-ի N 07/80-2/22591-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 24-ի N 06/3-8/28607-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ 02600539) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2013 թվականի հոկտեմբերի 14-ի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզում գյուղացիական բնակչության կենսամակարդակի բարձրացման և պարենի անբավարարվածության կրճատման» ծրագրի մասին» N Մ-928-Ա (2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-1021-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

Համիկ Տոնոյան ԱՁ-ի հետ (ՀՎՀՀ՝ 37473485) 2016 թվականի ապրիլի 25-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մարկետինգային ծառայությունների մատուցում՝ 8,025,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ - 931 - Ա**
**քաղ. Երևան**

# «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՐՁԱՆ ԳՅՈՒՂԻ ԴՊՐՈՑԻ ՄԱՐԶԱԴԱՀԼԻՃԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 27-ի N 07/80-2/22565-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 23-ի N 02/14/11881-16, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 29-ի N 03/12.2/12020-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտ-ների կոմիտեի սեպտեմբերի 24-ի N 06/3-8/28608-16 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2016 թվականի սեպտեմբերի 23-ի N 01/21.1/3661-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 2,173,500 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան գյուղի դպրոցի մարզադահլիճի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2016 թվականի սեպտեմբերի 01-ին կնքված՝ N ՀՀ-Կ-10/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մարզադահլիճի գույքի պատրաստման, գնման և տեղափոխման աշխատանքների իրականացում՝ 2,173,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:



3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արմեն Սարգսյան

«26» սեպտեմբերի 2016 թ.

« Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան գյուղի դպրոցի մարզադահլիճի կահավորում»

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել Տավուշի մարզի Խաչարձան գյուղի հիմնադրամի կողմից վերանորոգված միջնակարգ դպրոցի մարզադահլիճը անհրաժեշտ կահույքով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Տավուշի մարզ, կրթության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է՝ 2.173.500,00 ՀՀ դրամ: |

2

| | | |
|---|---|---|
| 117 | Խաչատրյան | Արփիկ | Ավտոկայանի տար. 104/584 |
| 118 | Գրիգորյան | Լուիզա | Պարոնյան 40 |
| 119 | Մարտիրոսյան | Արսեն | Լալայան 128/015 |
| 120 | Սարգսյան | Լիլիթ | Կազաչի պոստ 242, նմ.12 վարձով |
| 121 | Աղեկյան | Աստղիկ | Գարեգին Նժդեհի 26, 1 հանր., բն7 |
| 122 | Մխիթարյան | Ռիմա | Կազաչի պոստ 128/019 |
| 123 | Սայյան | Գայանե | Կազաչի պոստ 128/017 |
| 124 | Խաչատրյան | Ռուդիկ | Խրիման Հայրիկ 116/180 |
| 125 | Խաչատրյան | Ռիտա | Խրիման Հայրիկ 116/181 |
| 126 | Հարությունյան | Նվարդ | Ղորղանյան 108 |
| 127 | Մարգարյան | Սիլվա | Ղանդիլյան 119/010 |
| 128 | Ղազարյան | Աննա | Մագնիսահաղորդիչների գործ 158/234 |
| 129 | Հարությունյան | Արփինե | գ. Թորոս, փող.6, նկուղի 2, տուն 4 |
| 130 | Վիրաբյան | Սահականուշ | Աբովյան 109/064 |
| 131 | Վիրաբյան | Հայաստան | Աբովյան 109/065 |
| 132 | Չոլախյան | Աիդա | Շիրակացի 205/005 |
| 133 | Մկրտչյան | Գոհարիկ | Շիրակացի 205/093 |
| 134 | Մելոյան | Գայանե | Անտառավան 3 թաղ., 230/376 |
| 135 | Գալոյան | Վարդուշ | Գարեգին Նժդեհի 220/104 |
| 136 | Հարությունյան | Անժելա | Հովսեփյան 229/366 |
| 137 | Հովսեփյան | Նաիրա | Աղյուսի 137 |
| 138 | Գևորգյան | Օֆելյա | Սավոյան 227/164 |
| 139 | Խաչատրյան | Քրիստինե | Ռեպինի 217/455 |

05532775
Հասարակական կազմակերպություն
общественная организация
non-governmental organization

ձր 12/3.7

| | | | |
|---|---|---|---|
| 140 | Խարշուդյան | Աննա | Մուշ-2, 18շ., բն. 19 |
| 141 | Թութունջյան | Թամարա | Մսի Կոմբինատ 128/221 |
| 142 | Հակոբյան | Ալինա | Տերյան 106/286 |
| 143 | Եղոյան | Հեղինե | Խրիմյան Հայրիկ 2նրբ., [illegible]7/065 |
| 144 | Աբրահամյան | Արուսյակ | Արագած թաղ., 6շ., բն. 8 |
| 145 | Հակոբյան | Ալվարդ | Մսի Կոմբինատ 124/032 |
| 146 | Խալաթյան | Ռոզա | Խանջյան 231/212 |
| 147 | Մելքոնյան | Կատյա | Տեքստիլագործների 220/221 |
| 148 | Խաչատրյան | Գոհար | Շիրակացի 15 դոս, 13բն. |
| 149 | Հաջյան | Մարիետա | Վարդ-Բաղ 203/006 |
| 150 | Գալստյան | Համլիկ | Բուլվարային թաղ. 203/005 |
| 151 | Մանուկյան | Քրիստինե | Մուշ-2, 38շ., բն. 46 |
| 152 | Գալստյան | Ոսկեհատ | Գորկու 190շ բակ, տն 161/047 |
| 153 | Հովհաննիսյան | Անահիտ | Շահումյան 130/022 |
| 154 | Մանուկյան | Մանուկ | Ղանդիլյան 119/054 |
| 155 | Գասպարյան | Գրիգոր | Ֆանտանների թաղամաս |
| 156 | Գրիգորյան | Մանյա | Ավտոկայան 104/143 |
| 157 | Վարդանյան | Գոհարիկ | 227/030 |
| 158 | Հակոբյան | Սիլվա | 228/268 |
| 159 | Մխիթարյան | Նելլի | Սևյան 119/192 |
| 160 | Նազարյան | Սիրուն | Տրդատ Ճարտարապետի 6շ., 8բն. |
| 161 | Սնոյան | Հեղինե | Մինաս Ավետիսյան 37շ., բն. 10 |
| 162 | Գրիգորյան | Ժենյա | Մանկավարժ. քոլեջ, ռազմական ամբիոնի հարևանությամբ |
| 163 | Աբգարյան | Կարինե | Շիրակացի 204/016 |
| 164 | Շաբոյան | Էվելինա | 128/087 |
| 165 | Քոչարյան | Թինա | Կազաչի պոստ 128/023 |
| 166 | Խաչատրյան | Ռուբինա | Տերյան 131/076 |
| 167 | Մարյան | Սոֆյա | Ավտոկայան 104/689 |
| 168 | Աթոյան | Յուրի | Գարեգին Նժդեհի 223/060 |
| 169 | Բարսեղյան | Ռուզաննա | Մուշ-1, 1/3, 79բն. վարձով |
| 170 | Մխիթարյան | Քնարիկ | Աթոյան 10 տուն |
| 171 | Մանուկյան | Մարիամ | Կոմիտասի 1նրբ., տուն 3 |
| 172 | Աստրյան | Աստղիկ | 124/009, Ղարիբջանյան խճ, |
| 173 | Չերնամորյան | Դավիթ | Երևանյան խճ, 49ա շ., բն 14 |
| 174 | Մարկոսյան | Փեփրոն | 213/ 339 Վազգեն Սարգսյան |
| 175 | Եղոյան | Ռուզաննա | Ռեպինի 217/518 |
| 176 | Խաչատրյան | Ռիտա | Սավոյան 226/045 |
| 177 | Ենգոյան | Լուսիկ | 226/087 |
| 178 | Դավթյան | Լարիսա | 227/043 |
| 179 | Մկրտչյան | Եղիշե | Կայինի 14բ, բն.30 |
| 180 | Գրիգորյան | Մանուշակ | Վ.Սարգսյան 228/089ա |
| 181 | Մանուկյան | Սուսան | Սևյան 158/317 |
| 182 | Ալեքսանյան | Անժելա | Եսայան 213/006ա |
| 183 | Կոստոսյան | Սուզան | Բուլվարային 2ա հանր. |
| 184 | Պետրոսյան | Կարինե | Անտառավան 227/328 |
| 185 | Սարոյան | Մարինե | Վ.Սարգսյան 224/470 ա |
| 186 | Ղազարյան | Ռիմա | Շիրակացի 91 |
| 187 | Բաբայան | Կարինե | Ղուկասյանի 114/022 |
| 188 | Հովհաննիսյան | Ռիմա | Տեպլավոզի 159/287 |

05532775
Հասարակական կազմակերպություն
общественная организация
non-governmental organization

| | | | |
|---|---|---|---|
| 189 | Գրիգորյան | Եվգինե | Շինարարների 229/133ա |
| 190 | Հարությունյան | Հերիքնազ | Վ.Սարգսյան 6 շ., 56 բն |
| 191 | Բաղդասարյան | Անուշ | Կոմինտերնի 160/086 |
| 192 | Կարապետյան | Ռուզաննա | Սավոյան 226/030 |
| 193 | Սարգսյան | Նարինե | Այգաբաց 4-րդ շարք, 21 տուն |
| 194 | Ռաշոյան | Հասմիկ | Գործարանային նրբ. տուն 35 |
| 195 | Ազմանյան | Նարինե | Սելեկցիոն կայան,տուն 5 պահ[illegible] |
| 196 | Գալոյան | Մանուշակ | Մուշ-2/2 54շ., բն 20 |
| 197 | Մանուկյան | Արմենուհի | Ռեպինի 217/086 |
| 198 | Սուքիասյան | Մարիաննա | Տիմիրյազևի 22 |
| 199 | Կոստանդյան | Լուսինե | Գործարանային 2 հանր. |
| 200 | Օհանյան | Ամալյա | Տոլստոյի 12 ա |
| 201 | Դանիելյան | Բերսաբե | Սավոյան 224/434 |
| 202 | Ավագյան | Լուսիկ | Շիրակացի 33 |
| 203 | Մինասյան | Սաթիկ | Մուշ-2/2 54շ., բն 28 |
| 204 | Ղազարյան | Հասմիկ | Մազմանյան 183 |
| 205 | Զաքարյան | Արման | Ղուկասյան 150 |
| 206 | Մաթևոսյան | Արաքսյա | Պողպատավան 2շ., տ 10 |
| 207 | Թովմասյան | Հայկ | 224/299 գ |
| 208 | Երիցյան | Այծեմիկ | 159/109 |
| 209 | Մելքոնյան | Լուսինե | Օդանավակայանի տար. 152/220 |
| 210 | Խաչատրյան | Լիլիթ | Սավոյան 224/266 |
| 211 | Ղազարյան | Լաուրա | Ղորղանյան տուն 2 |
| 212 | Սարգսյան | Վարդուհի | 206/014 |
| 213 | Մկրտչյան | Ջեմմա | Ղուկասյան 12 շ, 24 տ |
| 214 | Չաթոյան | Արմինե | Ղանդիլյան 21, 6-րդ պատ, բն.2 |
| 215 | Ղանդիլյան | Նելլի | Ղանդիլյան 27 շ, բն.1 |
| 216 | Զաքարյան | Ամալյա | 104/425 |
| 217 | Մկրտչյան | Շուշանիկ | Ղանդիլյան փող տուն 56 |
| 218 | Գրիգորյան | Արմենուհի | Աբովյան 133/153ա |
| 219 | Խաչատրյան | Գոհար | Սնյան119/142 |
| 220 | Դավթյան | Սվետլանա | Մուշ-2-2 39շ, բն. 20 |
| 221 | Հովհաննիսյան | Լիլիթ | Վարդ-Բաղ 1 միկր. 4թաղ., 6շ., բն.13 |
| 222 | Մկրտչյան | Աստղիկ | Անտառավան 3-րդ թաղ., 25շ, բն 29 |
| 223 | Սուքիասյան | Վարդուհի | Անի թաղ, 60 շ, բն 15 |
| 224 | Գրիգորյան | Եվգինե | Շինարարների 229/130 ա |
| 225 | Նալբանդյան | Կլարա | Շիրակացի 35 դոս, 3 բն |
| 226 | Դարբինյան | Մարգարիտ | Սավոյան 224/436 |
| 227 | Խաչատրյան | Համասփյուռ | Սավոյան 224/442 |
| 228 | Հարությունյան | Շամիրամ | Ավտոկայան 104/118 |
| 229 | Կարապետյան | Մարինե | 152/070 |
| 230 | Գևորգյան | Արմինե | Ավտոկայան 104/696 |
| 231 | Հակոբյան | Կարինե | Տ Ճարտարապետի 34 շ, բն 1 |
| 232 | Չոմարյան | Արփինե | Ավտոկայան 104/406 |
| 233 | Մարկոսյան | Փեփրոն | Վազգեն Սարգսյան 213/339 |
| 234 | Գևորգյան | Հասմիկ | Սավոյան 224/442 ա |
| 235 | Թովմասյան | Գագիկ | Ղուկասյան 87տ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ-941-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 22-ի N 07/80-2/22329-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 22-ի N 06/3-8/28234-16 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 22-ի N ԱՄ/22.2/10270-16 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «AmeriCares» հիմնադրամի կողմից ԱՄՆ-ի «Հայաստան-Արցախ» հիմնադրամի միջոցով, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղերի և բժշկական նշանակության ապրանքների (102 տեղ, 10,780.8 կգ ընդհանուր քաշով, 402,855.52 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,285 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման (ցանկը կցվում է) ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## «ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՐՑԱԽ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿ

ՀԱՀ 047

| Հ/Հ | Դոնոր | Նկարագրություն | Ստացող | Կոդ | Արկղ | Քաշ (lbs) | Արժեք (ԱՄՆ դոլար) |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Հայաստան Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Դեղեր | Մուրադյան Ա. – ՀՀ առողջապահության նախարարություն | Air 047-01 | 308 | 6611 | 54,588.62 |
| 2. | Հայաստան Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Դեղեր | Ավետիսյան Կ.- ՀՀ-ում ԼՂՀ ներկայացուցչություն | NKR Air 047-02 | 316 | 5111 | 169,966.07 |
| 3. | Հայաստան Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Դեղեր | Ղազարյան Ս.- «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ | Air 047-03 | 34 | 586 | 14,291.66 |
| 4. | Հայաստան Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Դեղեր | Մինասյան Ա.- «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն | Air 047-04 | 11 | 71 | 12,125.12 |
| 5. | Հայաստան Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Դեղեր | Բայբուրդյան Գ.- Մուրացան բժշկական կենտրոն | Air 047-05 | 26 | 490 | 20,516.13 |
| 6. | Հայաստան Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Բժշկական պարագաներ | Մուրադյան Ա. – ՀՀ առողջապահության նախարարություն | Air 047-06 | 651 | 8444 | 103,420.20 |
| 7. | Հայաստան Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Բժշկական պարագաներ | Ավետիսյան Կ.- ՀՀ-ում ԼՂՀ ներկայացուցչություն | Air 047-07 | 192 | 2180 | 7,755.41 |
| 8. | Հայաստան Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Հագուստ | Հարությունյան Ս.- «Մեծն Ներսես» բարեգործական հիմնադրամ | Air 047-08 | 9 | 275 | 20,192.31 |
| | **Ընդամենը** | | | | 1547 | 23768 | 402,855.52 |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ-942-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 24-ի N 07/80-2/22440-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 24-ի N 06/3-8/28618-16 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 24-ի N ԱՄ/22.2/10356-16 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Միջազգային առողջապահական գործընկերներ» կազմակերպության կողմից, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված բժշկական նշանակության ապրանքների (11 տեղ, 1,722 կգ ընդհանուր քաշով, 27,269.18 բրիտանական ֆունտ ստեռլինգին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ-943-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (ՀԱՅԱՍՏԱՆ) ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 26-ի N 07/80-2/22497-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 24-ի N 06/3-8/28617-16 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 24-ի N ԱՄ/22.2/10358-16 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ամերիկահայ բարերար Լևոն Նազար Նազարյանի միջոցով՝ սիրիահայ փախստականների բուժօգնության կազմակերպման նպատակով Հայկական բարեգործական ընդհանուր միություն հիմնադրամի (Հայաստան) հասցեով ուղարկված բժշկական սարքերի և սարքավորումների (մեկ տեղ, 274 կգ ընդհանուր քաշով, 34,639.16 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 1,620 եվրո փոխադրման և այլ ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. Հայկական բարեգործական ընդհանուր միություն հիմնադրամին (Հայաստան)՝ բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ-944-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 26-ի N 07/80-2/22499-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 27-ի N 06/3-8/28963-16 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 24-ի N 1/06/1150-16 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել եվրոպայի բասկետբոլի ֆեդերացիաների միջազգային ասոցիացիայի կողմից, որպես օժանդակություն, «Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված բասկետբոլի գնդակների (170 հատ՝ 4 տեղ, 75 կգ ընդհանուր քաշով, 170 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 281,300 դրամ, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ-945-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՈԼԵՅԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 16-ի N 07/80-2/22022-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 16-ի N 06/3-8/27723-16 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 16-ի N 1/06/1113-16 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Միջազգային վոլեյբոլի ֆեդերացիայի կողմից, որպես օժանդակություն, «Հայաստանի վոլեյբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված մարզագույքի (մեկ տեղ, 10 կգ ընդհանուր քաշով, 269 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 315.40 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի վոլեյբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ-946-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-261-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 22-ի N 07/80-2/22328-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 22-ի N 06/3-8/28233-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված կվարցային ավազը (50,000 կգ ընդհանուր քաշով, 2,750 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլի զարգացմանը» ծրագրի մասին» N Մ-261-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ-947-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ- ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի N Մ-434-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ- ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 16-ի N 07/80-2/22020-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 16-ի N 06/3-8/27717-16 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված կվարցային ավազը (125,000 կգ ընդհանուր քաշով, 6,875 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 20-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Համայնքներում խաղադաշտերի կառուցում» ծրագրի մասին» N Մ-434-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ-948-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ-797-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 22-ի N 07/80-2/22254-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 22-ի N 06/3-8/28236-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված խաղադաշտի արհեստական խոտածածկը, խոտածածկի տեղադրման նյութերը և պարագաները (մեկ տեղ, 3,160 կգ ընդհանուր քաշով, 8,850 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 850 եվրո փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 9-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտի ենթակառուցվածքների բարելավում» ծրագրի մասին» N Մ-797-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ-949-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 24-ի N 07/80-2/22496-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 27-ի N 06/3-8/28962-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ   է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված ներքոհիշյալ ապրանքները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1444-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում՝

1) հեռահաղորդակցման սարքավորումներ՝ մեկ տեղ, 0.5 կգ ընդհանուր քաշով, 291 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 21 եվրո, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ.

2) տեսախցիկի պայուսակներ և օբյեկտիվի ծածկ՝ մեկ տեղ, 0.61 կգ ընդհանուր քաշով, 46.07 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 21.10 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ-950-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 16-ի N 07/80-2/22021-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 16-ի N 06/3-8/27721-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1444-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

ԱՄՆ-ի քաղաքացի Լառա Սարկիսսյանի հետ (անձնագիր՝ 497978735) 2016 թվականի մայիսի 20-ին կնքված՝ N 01-20.05.16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման անհատույց ծառայությունների մատուցում՝ գնահատված 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

02508251

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ու Մ

**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ-951-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 16-ի N 07/80-2/22045-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 16-ի N 06/3-8/27719-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1444-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արեգ» արտադրական կոոպերատիվի հետ (ՀՎՀՀ՝ 05007719) 2016 թվականի օգոստոսի 26-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական գործիքների ձեռքբերում՝ 199,583.34 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ-952-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 2

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 24-ի N 07/80-2/22470-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 22-ի N 06/3-8/28216-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ   է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1444-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

ԱՄՆ-ի քաղաքացի Վահե Քարամյանի հետ (անձնագիր՝ 546901368) 2016 թվականի սեպտեմբերի 8-ին կնքված՝ N 01-08.09.16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման անհատույց ծառայությունների մատուցում՝ գնահատված 500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ-953-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 24-ի N 07/80-2/22441-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 22-ի N 06/3-8/28237-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1444-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ռեդ-փունթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03312103) 2016 թվականի օգոստոսի 18-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպագրական աշխատանքների իրականացում՝ 136,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ֆասադ-Հ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01845893) 2016 թվականի օգոստոսի 18-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մետաղական հենակներով ապակե դռան ձեռքբերում՝ 200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                            Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ-954-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի N Մ-215-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 16-ի N 07/80-2/22018-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 16-ի N 06/3-8/27722-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 23-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն - Գյումրի» ծրագրի մասին» N Մ-215-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի հունիսի 26-ի N Մ-680-Ա, դեկտեմբերի 16-ի N Մ-1359-Ա և 2016 թվականի մայիսի 20-ի N Մ-433-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

ԱՄՆ-ի քաղաքացի Արենի Աղպապեանի հետ (անձնագիր՝ 491647205) 2016 թվականի սեպտեմբերի 6-ին կնքված՝ N 01-06.09.16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 1,300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ-955-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի N Մ-215-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 24-ի N 07/80-2/22464-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 22-ի N 06/3-8/28215-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 23-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն - Գյումրի» ծրագրի մասին» N Մ-215-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի հունիսի 26-ի N Մ-680-Ա, դեկտեմբերի 16-ի N Մ-1359-Ա և 2016 թվականի մայիսի 20-ի N Մ-433-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պիկ Լիցենյում» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00804437) 2016 թվականի հուլիսի 28-ին կնքված՝ N 08/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչային սեղանների երկու մետաղական տակդիրի ձեռքբերում՝ 380,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ-956-Ա**
**քաղ. Երևան**

**«ԱՌ-ԴԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ 11 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 19-ի N 07/80-2/22095-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 15-ի N 06/3-8/27693-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 19-ի N 02/14/11688-16, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 24-ի N 06/18.1/5147-16 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի սեպտեմբերի 16-ի N 01/5590-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «ԱՌ-ԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312) իրականացվող՝ 90,237,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Գյումրի քաղաքում 11 սոցիալական բնակարանի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. «ԱՌ-ԴԱ» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը



մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին և Գյումրու քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի
գործադիր տնօրեն Հ. Ստեփանյանի կողմից

«28» օգոստոսի 2016 թ.

**«Գյումրիում 11 սոցիալական բնակարանի կառուցման» ծրագրի**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Գյումրիում տնակային ավանների բնակիչների բնակարանային պայմանների բարելավում՝ գոյություն ունեցող կիսակառույց շենքը տասնմեկ բնակարանի վերակառուցում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է բարեգործի խրախուսում և նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ-ի «Հայ օգնության և աջակցման ընկերակցություն (ARDA)» շահույթ չհետապնդող կազմակերպություն՝ 76,602,000 դրամ, Գյումրու քաղաքապետարան՝ 13,635,000 դրամ: |
| 4. | Ծրագիրը կատարողը | «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Գյումրի քաղաքի Մ. Խորենացի 46/1՝ քաղաքաշինության բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 90,237,000 դրամ, հարկային արտոնություն է ակնկալվում 76,602,000 դրամից: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Գյումրու ժամանակավոր տնակներում ապրող հաշմանդամ, ծեր, միայնակ և մանկատների շրջանավարտ ընտանիքներ, որոնց ընտրությունը կատարվելու է Գյումրու քաղաքապետարանի տրամադրած ցուցակների հիման վրա՝ «Գյումրին առանց տնակների» ծրագրի հոգաբարձուների խորհրդի և «ԱՌԴԱ» բարեգործական |



| | | |
|---|---|---|
| | | հիմնադրամի հետ համատեղ ստեղծված հանձնախմբի ուսումնասիրությանների արդյունքում:<br>Բնակարանները շահառուներին հանձնվում են բնակության իրավունքով: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2016 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2017 թվականի օգոստոսի 1-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագիրն իրականացվելու է մեկ փուլով՝ վերակառուցման-շինարարական աշխատանքներ-01.09.2016 թ. - 01.08.2017 թ.՝ 90,237,000 դրամ: Գոյություն ունեցող կիսակառույցի (առկա են 1-ին և 2-րդ հարկի պատերը և 1-ին հարկի ծածկը) վրա ավելացվելու է 3-րդ հարկ: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | - նախագծա-նախահաշվային աշխատանքներ և փորձաքննություն՝ 6,542,000 դրամ<br>- հեղինակային և տեխնիկական հսկողություն՝ 1,642,000 դրամ,<br>- շինարարական աշխատանքների իրականացում՝ 82,053,000 դրամ, |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման համար կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարան, որն այս նպատակով տրամադրել է սեփականության իրավունքով համայնքին պատկանող կիսակառույց շենք, ինչպես նաև իրականացնելու է նախագծա-նախահաշվային ու փորձաքննության աշխատանքները և արտաքին կոմունիկացիաները: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից սահմանված կարգով: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ-957-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 27-ի N 07/80-2/22584-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 27-ի N 06/3-8/28970-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված սանիտարական կերամիկան, վարդակները և պղնձյա ժապավենը (4 տեղ, 626.12 կգ ընդհանուր քաշով, 393,107.70 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 10,000 ռուբլի, «ԵՏՄ» բեռ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա, հուլիսի 24-ի N Մ-758-Ա, 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-111-Ա և հուլիսի 22-ի N Մ-671-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ-958-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 29-ի N 07/80-2/22842-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 28-ի N 06/3-8/29147-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված ապակյա հենապատերի կառուցման համար նախատեսված ալյումինե տրամատները և մանրամասերը (9 տեղ, 592.9 կգ ընդհանուր քաշով, 275,088.99 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 10,000 ռուբլի, «ԵՏՄ» բեռ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա, հուլիսի 24-ի N Մ-758-Ա, 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-111-Ա և հուլիսի 22-ի N Մ-671-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ-959-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1413-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1

**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 29-ի N 07/80-2/22832-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 28-ի N 06/3-8/29143-16 ու Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 29-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/8960-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված բրինձը (880 տեղ, 22,070.4 կգ ընդհանուր քաշով, 38,580 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 5,800 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-1413-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում (բաշխման ցանկը կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Երևանի քաղաքապետին ու Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի և Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

հնվոյս P-D1060916 05.09.2016

*Բեռի բաշխման ցանկ*

| N N | Ապրանքի անվանումը | Շահառուները ըստ մարզերի | | Շահառուների քանակը | Շահառուներին բաշխվող քանակը (կգ) | Արժեքը ըստ փաստաթղթերի (ԱՄՆ-ի դոլար) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Բրինձ | Գեղարքունիքի մարզ | Գետիկ | 74 | 375 | 659 |
| | | | Ազատ | 164 | 832 | 1.459 |
| | | | Մարտունի | 73 | 370 | 650 |
| | | | Ղպրաբակ | 81 | 411 | 721 |
| | | | Վահան | 188 | 954 | 1.673 |
| | | | Կալավան | 23 | 117 | 205 |
| | | | Բարեպատ | 6 | 30 | 53 |
| | | | Ջորավանք | 31 | 157 | 276 |
| | | | Անտառամեջ | 22 | 112 | 196 |
| | | | Գավառ | 61 | 310 | 543 |
| | | | Թթուջուր | 81 | 411 | 721 |
| | | Արմավիրի մարզ | Արտաշար | 51 | 259 | 454 |
| | | Արարատի մարզ | Վեդի | 17 | 86 | 151 |
| | | | Արտաշատ | 16 | 81 | 142 |
| | | | Գետազատ | 39 | 198 | 347 |
| | | | Մրգանուշ | 16 | 81 | 142 |
| | | Կոտայքի մարզ | Չարենցավան | 13 | 66 | 116 |
| | | | Սևաբերդ | 41 | 208 | 365 |
| | | | Ջրաղբյուր | 18 | 91 | 160 |
| | | | Աբովյան | 38 | 193 | 338 |
| | | Լոռու մարզ | Վանաձոր | 48 | 244 | 427 |
| | | Տավուշի մարզ | Դիլիջան | 15 | 76 | 133 |
| | | | Իջևան | 18 | 91 | 160 |
| | | Երևան | | 3201 | 16247 | 28.486 |
| | Ընդամենը | | | 4335 | 22000 | 38.580 |

*«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի տնօրեն*   Ք. Ջամբազյան

դր. 12/3.10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**30 սեպտեմբերի 2016 թվականի N Մ-960-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1413-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 2

**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 30-ի N 07/80-2/22853-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 28-ի N 06/3-8/29142-16 ու Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 29-ի N ՖԲ/ԱսՄ-2-1/8961-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված տոմատի մածուկը (1,855 տեղ, 20,412.42 կգ ընդհանուր քաշով, 39,974.20 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 2,800 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-1413-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում (բաշխման ցանկը կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Երևանի քաղաքապետին ու Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի և Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

*Բեռի բաշխման ցանկ*

հնվոյս P-D022091601 21.09.2016

| N N | Ապրանքի անվանումը | Շահառուները ըստ մարզերի | | Շահառուների քանակը | Շահառուներին բաշխվող քանակը (կգ) | Արժեքը ըստ փաթեթների (ԱՄՆ-ի դոլար) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տոմատի մածուկ | Գեղարքունիքի մարզ | Գետիկ | 74 | 304 | 682 |
| | | | Այգուտ | 164 | 674 | 1.512 |
| | | | Մարտունի | 73 | 300 | 673 |
| | | | Դպրաբակ | 81 | 333 | 747 |
| | | | Վահան | 188 | 772 | 1.734 |
| | | | Կալավան | 23 | 94 | 212 |
| | | | Բարեպատ | 6 | 25 | 55 |
| | | | Չորավանք | 31 | 127 | 286 |
| | | | Անտառամեջ | 22 | 90 | 203 |
| | | | Գավառ | 61 | 251 | 562 |
| | | | Թթուջուր | 81 | 333 | 747 |
| | | Արմավիրի մարզ | Արտաշար | 51 | 209 | 470 |
| | | Արարատի մարզ | Վեդի | 17 | 70 | 157 |
| | | | Արտաշատ | 16 | 66 | 148 |
| | | | Գետազատ | 39 | 160 | 360 |
| | | | Մրգանուշ | 16 | 66 | 148 |
